



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«15» հունիսի 2019 թ.

N 1- ՆԱ

**2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԶԱԿՑՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՄԱՆ
ՄԵԿ ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշման կիրարկումն ապահովելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

- 1) 2019 թվականի ընթացքում աջակցող միջոցների ձեռքբերման մեկ պետական հավաստագրի գնային արժեքը՝ համաձայն N 1 հավելվածի:
- 2) 2019 թվականի ընթացքում առանց պետական հավաստագրերի տրամադրվող աջակցող միջոցների գնային արժեքը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը՝ վերապահել նախարարի տեղակալ տիկին Զ. Բաթոյանին:



**ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ**